



ԼՈՒՍԻՆԵ ՆԱԼԲԱՆԳՅԱՆ

ՀՖՀՀ, 3-րդ կուրս, իրավաբանական ֆակուլտետ

ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՆՉԳԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ



Այսօր իրավական և ժողովրդավար ուղի ընտրած երկրի պայմաններում առավել քան կարևոր է բարձրաձայնել անձի պաշտպանության իրավունքի ապահովումը: Այս իրավունքի ապահովման իրավական երաշխիքներից մեկն էլ քրեական գործերով արդարադատություն ապահովելն է մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև: Գործող քրեադատավարական օրենսդրությունը և ներկայիս իրավակիրառ պրակտիկան չեն ապահովում մրցակցության ամբողջական լինելը, մասնավորապես պաշտպանի համար: Առկա անհավասար հնարավորությունները կարելի է վերացնել՝ մինչդատական վարույթում ապացուցողական զանգվածի ձեռքբերմանն ուղղված գործունեության շրջանակներում պաշտպանի իրավունքները ընդլայնելու միջոցով:

Ուստի, տվյալ հոդվածը հետամուտ է լինում նախ ներկայացնել Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավա-

րության օրենսգրքով պաշտպանին տրված հնարավորությունների սահմանները, որոնք, կարծում ենք, խիստ սահմանափակում են վերջինիս կողմից արդյունավետորեն և ժամանակատար պայմաններում ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները, ինչը խոչընդոտում է պաշտպանին ամբողջությամբ իրականացնելու իր պաշտպանությունը: Ապա ներկայացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկված հնարավորությունների շրջանակի ընդլայնումը և միջազգային համեմատական եղանակով վեր է հանվում մեր իրականությունում հնարավորինս քիչ ռիսկերով գործարկելի մոդելը, որը չի խախտի պաշտպանական կողմի իրավունքները և կբարձրացնի վերջինիս անկախությունն ու դերն ապացույցներ ձեռք բերելու գործընթացում:

ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու, ձեռքբերելու, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք: Քրեական դատավարության օրենսգրքը և ս ամրագրել է այս կարևորագույն սկզբունքը: Ընդ որում, կասկածյալի և մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը կազմում է անձի ընդհանուր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մի մասը, քանի որ իրավաբանական օգնության հասկացությունը ավելի լայն է, օրինակ՝ անձը կարող է օգտվել փաստաբանի ծառայություններից տարբեր այլ բնույթի իրավական հարցեր ունենալու ժամանակ



ԼՂՀ դատական իշխանություն

ևս: Քրեական դատավարությունում կասկածյալի և մեղադրյալի պաշտպան կարող է լինել միայն փաստաբանը:

Քրեական դատավարության՝ որպես դատավարական գործընթացի բազային սկզբունքներից է նաև մրցակցության սկզբունքը: Այսպես, մինչդատական վարույթի ընթացքում մրցակցության սկզբունքը տարբեր ձևերով է արտահայտվում քրեական գործի հարուցման և նախնական քննության (հետաքննության և նախաքննության) փուլերում, իսկ արդեն դատական վարույթում մրցակցության սկզբունքը դրսևորվում է իր բոլոր հատկանիշներով: Գրականության մեջ միշտ քաջ տեսաբաններ¹ գտնում են, որ մրցակցության սկզբունքը գործում է միայն դատական վարույթում, երբ անկողմնակալ դատարանի առջև, որը թեև կարող է դրսևորել ակտիվություն գործի քննության փուլում, մեղադրող և պաշտպանող կողմերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր դիրքորոշումները, այսինքն, ըստ էության, այս խումբ հեղինակների առաջարկած մոդելը տարանջատում է մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման կողմերին: Մինչդեռ, կարծում ենք, մրցակցության սկզբունքը դրսևորվում է նաև մինչդատական վարույթում, քանի որ գործի այս փուլում ևս առկա են երկու կողմեր, որոնք փորձում են յուրովի իրականացնել «քննություն» և մեծ հաշվով հենց այդ քննության արդյունքում էլ որոշվում է՝ արդյոք գործը հասնում է դատարան, թե ոչ, իսկ եթե հասնում է, ապա ինչպիսի ապացույցներ են առկա. այսինքն՝ նախնական քննության ընթացքում բոլոր այն դատավարական գործողությունների իրականացումը, որոնք ուղղված են ապացույցներ ձեռքբերելուն, վերջնական նպատակով ծառայում են հենց դատական վարույթի իրականացմանը:

Ուստի, կարևոր նշանակություն ունի օրենսդրի կողմից մրցակցության սկզբունքի դրսևորումների ամրագրումը մինչդատական վարույթում ևս:

Պետք է նշել, որ իրավահավասարության սկզբունքը սերտորեն փոխկապակցված է մրցակցության սկզբունքի հետ: Իրավահավասարություն ասելով՝ պետք է հասկանալ, որ

յուրաքանչյուր կողմ ունի հավասար օրենսդրական պայմաններ՝ ցանկացած դատավարական գործողություն կատարելիս օգտվելու նույն հնարավորություններից: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել, թե որ կողմն ինչպես կօգտագործի իրեն տրված հնարավորությունները իրավաչափ մրցակցության սահմաններում:

1. Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

1.1. Պաշտպանի կողմից ապացույցների ձեռք բերման կարգը մինչդատական վարույթի ժամանակ

Նախ և առաջ պետք է հասկանալ, թե քրեական վարույթի ո՞ր պահից է փաստաբանն ընդգրկվում գործում և ըստ այդմ էլ պարզել, թե օրենսդրությամբ ինչպիսի՞ հնարավորություններ են տրվում պաշտպանին ապացույցներ ձեռք բերելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածն ամրագրում է, որ պաշտպանը միայն կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունք ունի:

Սրանից հետևում է, որ պաշտպանյալի կարգավիճակ չունի բերման ենթարկվածը, մինչդեռ Վճռաբեկ դատարանը Գ.Միքայելյանի վերաբերյալ իր թիվ ԵԱԴԿ/0085/06/09 գործով արտահայտել է այն միտքը, որ անձին բերման ենթարկելու պահից վերջինս ունի փաստաբան հրավիրելու իրավունք²: Սա ենթադրում է, որ մինչև առերևույթ հանցագործություն կատարած անձին ձեռքբերված մասին արձանագրության մասին հայտարարելու պահը՝ չորս ժամվա ընթացքում փաստաբանը կարող է օգտվել իրեն տրված օրենսդրական հնարավորություններից և ձեռք բերել ապացույցներ: Իրականում, խնդիրն առաջանում է այն դեպքերում, երբ բերման ենթարկելուց հետո քրեական հետապնդումն իրականացնող մարմինը կատարում է քննչական կամ դատավարական գործողություններ, որոնց փաստաբանը չի մասնակցում՝ դեռևս գործին ներգրավված չլինելու պատճառով, օրինակ՝ իրեղեն ապացույցի՝



տեսակավառակի դիտում, որով բացահայտված փաստերն ու հանգամանքները կարող են հիմք հանդիսանալ հետազայում ձեռքարկալման որոշում կայացնելու համար: Մինչդեռ քրեական դատավարության օրենսգիրքն ամրագրում է, որ պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ իր պաշտպանյալը մասնակցել կամ ներկա են գտնվել: Արդյունքում, պաշտպանի իրավունքը՝ ծանոթանալու անձամբ մասնակցած դատավարական գործողության արդյունքում ձեռք բերված արձանագրությանը, չի իրագործվում, քանի որ ապացույցի ձեռք բերումը կողմերից մեկին հասանելի է ու մատչելի, մյուս կողմին՝ ոչ:

1.2. Առկա գործնական խնդիրների վերհանում և վերլուծություն

Աշխատանքի կատարման շրջանակներում կատարվել են հարցումներ շուրջ քառասուն պրակտիկ փաստաբանների հետ, ովքեր կիսվել են քրեական գործերով իրենց փորձով՝ պատմելով ապացույցների ձեռքբերման գործընթացում առաջացող գործնական այն խնդիրների մասին, որոնց իրենք բախվել են:

Հիմնականում, պաշտպանների մեծամասնությունը ցավով էր նշում, որ հայկական իրականությունում առկա է արատավոր պրակտիկա՝ նախ քննիչների կողմից մեղադրական կանխավարկածով քրեական գործ հարուցելու հակվածություն ունենալը, երկրորդ՝ ամեն կերպ պաշտպանի՝ ապացույցների և փաստական հանգամանքների հասանելիությանը խոչընդոտելը:

Այսպիսով, մրցակցության սկզբունքի խախտման տարբեր դրսևորումներն ակնհայտ են. այն է, որ պաշտպանին տրված են նորմատիվային սահմանափակ հնարավորություններ, առկա է պետական ռեսուրսների (օպերատիվ-հետախուզական, քննչական, դատախազական) կենտրոնացում՝ քրեական վարույթի օժանդակությանն ուղղված, քրեական հետապնդումն իրականացնող մարմնի

կողմից արդարացնող ապացույցների ձեռքբերումից խուսափում և այլն:

Հարցվողների ճնշող մեծամասնությունը նշում էր քրեական հետապնդումն իրականացնող մարմնի կողմից իրականացվող կամայականությունների մասին: Ուստի կարծում ենք, որ խիստ կարիք կա սահմանելու քրեական վարույթն իրականացնող մարմինների համար էթիկայի կանոններ, որոնք առավել բարձր իրավաբանական ուժ կունենան, քանի որ շատ հաճախ պաշտպանները բախվում են անհարգալից վերաբերմունքի: Կարծում ենք՝ սա կախված է նաև փաստաբանի ունեցած կշռից մեր իրականության մեջ: Խնդիրն այն է, որ նրանց անկախության համար բավարար երաշխիքներ չկան և վերջիններս միշտ կախման մեջ են պետական մարմիններից, օրինակ, երբ հայտնում են միջնորդություններ կամ ներկայացնում բողոքներ, դրանց թույլատրելիության սահմանները կրկին որոշում են նույն պետական մարմինները: Կարծում ենք՝ պաշտպանի ներկայացրած միջնորդությունները, բողոքները պետք է քննարկվեն ոչ թե պետական օղակի ներկայացուցիչների (ընդ որում մեղադրանքի կողմը ձևավորվում է պետական մարմնի կողմից), այլ անկախ մարմնի կողմից, որը պետք է փորձի հնարավորինս անկախ դարձնել փաստաբանի կողմից ապացույցի ձեռքբերման կարգը, ձևն ու հնարավորությունը քրեական հետապնդումն իրականացնող մարմնի հայեցողությունից:

Հարցումների արդյունքներն ամփոփելով՝ պրակտիկայում առկա կարևորագույն խնդիրներն առանձնացրել ենք հետևյալ կերպ.

ա) հարցաքննություն. քրեական դատավարության օրենսգիրքն ամրագրում է, որ նախքան հարցաքննությունը վկան պետք է տեղեկացվի, թե ո՞ր դեպքի (փաստի) առթիվ հարուցված քրեական գործով և պարզաբանման ենթակա ո՞ր հանգամանքների շուրջ է հարցաքննվում: Վճռաբեկ դատարանը Կարեն Սարոլխանյանի³ գործով հայտնել է, որ վկայի ցուցմունքը կղիտվի որպես քննչական գործողության կատարման կարգի էական խախտում, եթե նախքան ցուցմունք վերցնելը վերջինս չտեղեկացվի, թե որ քրեական գոր-



ԼՂՀ դատական իշխանություն

ծով է հարցաքննվում: Կարելի է եզրահանգել, որ այն ապացույցը, որը ձեռք է բերվել նման կերպ, պետք է ճանաչվի անթույլատրելի: Քննիչները շատ հաճախ չեն տեղեկացնում վկային, իսկ երբ պաշտպանը միջնորդություն է ներկայացնում ապացույցն անթույլատրելի ճանաչելու պահանջով, միջնորդությունը չի բավարարվում, քանի որ չկան լծակներ՝ պարզելու, թե արդյո՞ք քննիչը տեղեկացրել է վկային, թե՛ ոչ:

Կարծում ենք՝ տեխնիկական նորարարությունների այս դարաշրջանում հարցաքննության, առհասարակ բոլոր քննչական գործողությունների տեսանկարահանման գործընթացը մի շարք խնդիրներ կլուծի՝ կապված այն քննչական գործողությունների հետ, որոնց իրականացումը պարտադիր է ընթերակայի ներկայությամբ: Ընթերակայի ինստիտուտը, որից նաև հրաժարվում է Նախագիծը, բավականին խնդրահարույց է:

Խնդիր է նաև, երբ հարցաքննության ընթացքում ժամերը շատ հաճախ չեն ֆիքսվում, որ հետո փաստաբանը չկարողանա բողոքարկել և անթույլատրելի ճանաչել էական խախտմամբ ձեռք բերված ապացույցը: Սա արդեն խոսում է կամայականությունների մասին, ինչը, ցավոք, ըստ փաստաբանների, կրկնվում է շատ հաճախ:

Փաստաբանների մեծ մասի կարծիքով անընդունելի է այն մոտեցումը, երբ վկայի հարցաքննության դեպքում քննիչը կարող է հարցեր տալ, իսկ պաշտպանը չունի նման իրավասություն, վերջինս կարող է միայն ներկա գտնվել: Մինչդեռ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան⁴ (այսուհետ՝ Կոնվենցիա) ամրագրում է, որ պաշտպանն իրավունք ունի հարցեր տալ վկային: Քննիչները շատ հաճախ մեկնաբանում են այսպես, որ պաշտպանը կարող է անձամբ հարցաքննել վերջինին՝ օգտվելով քրեական դատավարության օրենսգրքով տրված մասնավոր անձանց հարցման ենթարկելու իրավունքից: Կարծում ենք, որ սա գործնականում միայն խոչընդոտներ է ստեղծում և արհեստականորեն բարդացնում վկային հարցաքննելու գործընթացը պաշտպանի կողմից: Մեր հասարա-

կությունում դեռևս ձևավորված չէ այնպիսի իրավագիտակցության մակարդակ, որ եթե փաստաբանը դիմի անձին երկրորդ անգամ հարցաքննելու, վերջիններս կհամաձայնվեն, դեռ ավելին՝ շատ հաճախ վկաները մեկնաբանում են, որ անձի անձեռնմխելիության իրավունքն է խախտվում, երբ երկրորդ անգամ պաշտպանն իրենց հարցաքննում է:

Հարցաքննության ընթացքում պաշտպանն իրավունք ունի իր ձեռագրով ցուցմունքում ներառել իր առարկությունները: Սա նույնպես առաջացնում է խնդիրներ, երբ քննիչն ասում է, որ դրանք վերաբերելի չեն կամ անպայման առարկությունները պետք է վերաբերեն անձի իրավունքների խախտմանը: Նույն կերպ ինչո՞ւ քննիչը ձեռք չի բերում միայն այն ապացույցները, որոնք առնչվում են անձի իրավունքների խախտմանը:

բ) փորձագիտական եզրակացություն.

Փորձագիտական եզրակացությունների հետ կապված պատճեն չեն տրամադրում պաշտպանին, թույլատրվում է միայն գրառումներ կատարել: Շատ փաստաբաններ հենց այդպես էլ անում են, պարզապես արտագրում են, ինչը գործնականում բարդացնում է գործընթացը և ավելի ժամանակատար է: Կարծում ենք՝ պատճենը չտրամադրելը չի կարող որևէ կերպ համարվել իրավաչափ:

գ) առերեսում.

Խնդրահարույց է նաև առերեսման ժամանակ պաշտպանի կարգավիճակը: Առերեսման ժամանակ պաշտպանը չի կարող հարցեր տալ առերեսվող անձին: Գործնականում խնդիրը լուծվում է հետևյալ կերպ. պաշտպանը պահանջում է ընդմիջում, գրում է հարցերը և փոխանցում իր պաշտպանյալին: Վերջինս արդեն ուղղում է հարցերն: Սա բարդացված գործընթաց է, ինչը հակասում է Կոնվենցիային, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ամրագրում է, որ պաշտպանն իրավունք ունի հարցման ենթարկել առերեսվող անձին: Շատ հաճախ, երբ պաշտպանները հղում են կատարում Կոնվենցիային և պահանջում տալ հնարավորություն հարցեր տալու, քննիչն ասում է, որ փաստաբանը չի համարվում դատավարության մասնակից:

դ) մասնավոր ակնաչևց հարցման ենթար-



կել պետք է նշել նաև այն խնդիրը, որ պաշտպանն անընդհատ միջնորդում է , որ անձը եղել է դեպքի վայրում, բայց քննիչը չի բավարարում միջնորդությունը, իսկ երբ պաշտպանն անձնական հարցման է ենթարկում տվյալ անձին և որպես ապացույց ներկայացնում կատարված հարցումը, դատարանը ճանաչում է այլ փաստական տվյալ: Այստեղ ևս կարծում ենք՝ չպետք է մտածել դոգմատիկ, եթե պաշտպանն ինքնուրույն կարողացել է ձեռք բերել որոշակի փաստեր, որոնք գործին վերաբերելի են և որպես ապացույց թույլատրելի, ապա դատարանը պետք է ընդունի դրանք և ստուգի վերջիններիս հավաստիությունը:

Անձնական հարցման ենթարկելու ժամանակ առաջացած խնդիրները լուծելու համար, ըստ մեզ, պաշտպանը պետք է ոչ թե համակարգչով հավաքի վկայի կամ այլ անձի տված վկայությունը, այլ պետք է թույլ տա վերջինիս, որպեսզի ինքն իր ձեռքով գրի, այնուհետև ստորագրի՝ գրելով, որ հարցումը տրված է իր կողմից, գրված է իր բառերով: Այսպես հետագայում դատարանում կիսուսափենք այն դեպքերից, երբ հարցաքննված անձինք հրաժարվում են ընդունել իրենց կողմից տրված ցուցմունքները՝ մեկնաբանելով, որ իրենք չեն ասել մման բան, ինչը նույնպես հանդիպում է պրակտիկայում:

ե) տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր. պաշտպանը նաև իրավունք ունի տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Գործնականում խնդիրներ առաջանում են, երբ նրանք մերժում են տրամադրել նման փաստաթղթեր: Կարծում ենք՝ սա անտրամաբանական է, եթե միևնույն է դատարանը միջնորդության քննարկման արդյունքներով կայացված որոշմամբ տրամադրում է նման ապացույց, քանի որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածով կարող է պաշտպանը ձեռք բերել, ապա ինչու են վարչական

մարմինները մերժում տրամադրել համապատասխան տեղեկատվությունը:

Առհասարակ, կարծում ենք՝ անտրամաբանական է նաև այն, որ քննիչները չեն բավարարում ապացույցները ձեռք բերելու նպատակով արված մի շարք միջնորդությունները, բայց հետո դատարանը բավարարում է: Այսինքն, եթե կա կանխավարկած, որ դատարանը կարող է բավարարել, ինչու է քննիչը մերժում, մի՞թե դատարանն ավելի ցածր օղակ է: Դատարանը, որպես արդարադատության բարձրագույն օղակ, պետք է հստակ կարգավորի միայն որոշակի խումբ ապացույցների ձեռքբերմանն ուղղված միջնորդությունները, իսկ մնացած պարագաներում անիմաստ է քրեական հետապնդումն իրականացնող մարմնի կողմից քննչական գործողությունների կատարման միջնորդությունները մերժելը և ծանրաբեռնելը դատարաններին:

Սակայն, մեծամասամբ պաշտպանները բախվում են խնդիրների նաև դատարանի կողմից միջնորդությունների չբավարարման հետ կապված: Ըստ փաստաբանների ճնշող մեծամասնության՝ վերջին օղակը Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է, որը հնարավորություն է տալիս իրավաչափության կանխատեսելի սահմաններում լուծումներ գտնել:

Ինչ վերաբերում է քննիչների կողմից նախնական քննության գաղտնիության պատճառաբանությամբ ինչ-ինչ տեղեկատվություն չտրամադրելուն, (ընդ որում փաստաբանները սա շատ հաճախ էին նշում իրենց խոսքում) ապա դա կարող է իրավաչափ և ընկալելի լինել միայն այն դեպքում, երբ շոշափվում է դատավարության մասնակիցների պաշտպանության հարցը, և նախնական քննության տվյալները չհրապարակելը հանդիսանում է դատավարական պաշտպանության միջոց: Քանի որ այստեղ ուղղակիորեն դա ուղղված է տվյալ անձի անվտանգությունն ապահովվելուն և միայն իրական վտանգի առկայությամբ իրավասու մարմինները կարող են նման որոշում կայացնել: Մնացած դեպքերում դա համարում ենք մրցակցության սկզբունքի կոպիտ խախտում:



2. Նախագծի կողմից առաջարկվող փոփոխությունները

Նախագիծը հայեցակարգային տեսանկյունից առաջնորդվել է այն սկզբունքով, որ քրեական դատավարության մրցակցային բնույթին համահունչ՝ պետք է ապահովել մինչդատական վարույթում դրա որոշակի տարրերի առկայություն, այն պայմանով, որ դա բացասաբար չանդադառնա վարույթի արդարացի քննության վրա:⁵

Նախագիծը, ի սկզբանե մրցակցության սկզբունքն ամրագրելով որպես դատավարական մոդել, կանգնել էր խնդրի առջև, թե ինչպես պետք է կարգավորվի մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի սահմանները, քանի որ եթե դատական վարույթի ընթացքում առավել ակնհայտ է երկու կողմերին տրված մրցակցության սկզբունքը, ապա նույնը չենք կարող ասել մինչդատական վարույթի մասին: Կարծում ենք՝ ապացուցողական գործունեություն ծավալելուն ուղղված միջոցները պետք է առավել քան ապահովվեն իրավական երաշխիքներով՝ մրցակցության սկզբունքի համատեքստում, որպեսզի հետագայում դատական վարույթի ընթացքում պաշտպանի առջև լինի խնդիր ոչ թե կրկին ձեռք բերելու նոր ապացույցներ կամ ամբողջությամբ վերլուծելու դրանք, այլ ընդամենը օբյեկտիվորեն հանգամանքների և փաստարկումների ներկայացմամբ իրականացնելու պաշտպանություն:

Պետք է ազնվորեն նշել, որ Նախագծի հեղինակներն ավելի համարձակ են գտնվել Նախագծի մշակման սկզբնական փուլում և առաջարկել են այն լուծումը, որ փաստաբանը կարող է իրականացնել առանձին գուգահեռ քննություն՝ լինելով անկախ քրեական հետապնդումն իրականացնող մարմնից: Կարծում ենք, գուգահեռ քննություն ասվածը չպետք է դիտել միայն այն տեսանկյունից, որ փաստաբանին տալով ինքնուրույն գործելու հնարավորություններ, կհասնենք մրցակցության իրավաչափ դրսևորումների մինչդատական վարույթում: Խնդիրը պետք է դիտել համակարգային մոտեցմամբ: Որպեսզի

փաստաբանն իրականացնի գուգահեռ քննություն, նախ անհրաժեշտ է երեք մակարդակներով համապատասխան փոփոխություններ իրականացնել՝ նորմատիվային՝ ամրագրելով փաստաբանի կողմից ապացույցների ձեռքբերման օրենսդրական հիմքերը, իրավակիրառ՝ ստեղծել փաստաբանական անկախ մարմին, որի ենթակայության տակ կգտնվեն լծակներ քննարկելու անհիմն կերպով մերժված միջնորդությունները և բողոքները, որոնք արվել են պաշտպանի կողմից, հասարակական-տեղեկատվական՝ բարձրացնել փաստաբանի դերը՝ որպես իրավամտաժողության հետևանք:

Ողջունելի է, որ Նախագիծը ներդրել է այնպիսի նոր ինստիտուտներ, ինչպիսիք են ցուցմունքի դեպոնացումը: Դեպոնացման ինստիտուտի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում մեղադրյալին առաջին անգամ դատավորի ներկայությամբ հարցաքննելու, իսկ պաշտպանի կողմից հակընդդեմ հարցման իրավունքն է ապահովվում: Նախագիծը սա նախատեսում է պաշտպանության կողմի համար, եթե անձը չի կարող ներկայանալ դատարան. սա պարզ է, այն դեպքում է, երբ օրինակ՝ առողջական խնդիրներ ունի, երկրում չէ և այլն: Հաջորդ դեպքն այն է, երբ կա ենթադրություն, որ անձը իրավաչափորեն կարող է հրաժարվել դատաքննության փուլում ցուցմունք տալուց: Կարծում ենք, որ Նախագիծը թերի կարգավորում է տվել, այն կտրվածքով, որ միայն հարցվողի դատարանում ներկայանալը բացառելն է դառնում պատճառ հակընդդեմ հարցման, մինչդեռ պետք էր առաջնորդվել հակառակ տրամաբանությամբ, որ մինչդատական վարույթում հակընդդեմ հարցման իրավունքը գործում է, անկախ նրանից՝ հետագայում կլինի մեծան դեպք, թե ոչ:

3. Միջազգայնագային փորձ. անգլո-սաքսոնական իրավական համակարգում պաշտպանի կողմից ապացույցների ձեռքբերման կարգը

Որպեսզի ճիշտ պատկերացնենք իրավունքի անգլո-սաքսոնական համակարգում



ավանդական, արդեն տարիների փորձ ունեցող և կայացած անկախ փաստաբանական ինստիտուտի էությունը, նախ նշենք, որ ընդհանուր առմամբ փաստաբանից ԱՄՆ-ում պահանջվում է տիրապետել քիչ ծավալով գիտելիքների, այն է, թե միայն իր նահանգի, նախատեսվում է նրա արտոնագրի ստացման ավելի լայն տեղեկատվության հասանելիություն ևս, այսինքն փաստաբանի գործունեությունը հնչեղություն ունի՝ որպես պաշտպանության գործառույթ իրականացնող անձ:

Անգլո-սաքսոնական մոդելում մինչդասական վարույթում քննության սկզբում «մեղադրյալը», անձը, որի նկատմամբ իրականացվում է քննություն, կարող է իմանալ կամ չիմանալ այն մասին, որ ինքը հանդիսանում է քննության օբյեկտ: Եթե այդ փուլում հրավիրվում է դատապաշտպան, ապա նրա դերը հիմնականում կայանում է նրանում, որ նա հսկի, որ քննությունը չխախտի իր շահառուի իրավունքները: Դատապաշտպանն այս դեպքում սպասում է այն պահին, երբ կներկայացվի պաշտոնական մեղադրանք, որից հետո կարելի է սկսել սեփական քննությունը: Փաստաբանի խնդիրը սակայն կարող է փոխվել՝ օրինակ «սպիտակ օձիքավորների» գործում, երբ մեղադրանքի ներկայացումը կարող է վնասել շահառուի հեղինակությանը և քիզնեսին՝ փաստաբանը այս դեպքում զբաղվում է կանխարգելման բնույթի տեղեկատվության հավաքագրմամբ, մինչև կներկայացվի մեղադրանքը: Այս կերպ տեղեկատվության հավաքագրման ժամանակ փաստաբանն ինքը պետք է հավաքի բոլոր ապացույցները ի օգուտ իր շահառուի՝ մեկ բացառությամբ. մեղադրողը պետք է ներկայացնի պաշտպանին ծանոթացման նպատակով հավաքագրված ցանկացած արդարացման ապացույցներ, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկություն, որոնք կարող են օգտագործվել դատարանում մեղադրող կողմի վկայությունները հերքելու համար⁶:

Սեփական ապացույցները հավաքելու համար (վկաների ցուցմունք, անձի հաստատում և այլն) դատապաշտպանը իրավունք ունի վարձելու մասնավոր հետախույզների,

եթե իհարկե շահառուի միջոցները թույլ են տալիս):⁷ Սակայն պետք է նկատել, որ նույնիսկ անապահով շահառուների դատապաշտպանների ծառայություններում կան սեփական հետախույզներ՝ արդարացնող տեղեկատվության հավաքագրման համար:

Այլ կերպ ասած, ԱՄՆ-ում քրեական գործընթացի ժամանակ դատապաշտպանի կողմից իրականացվում է անկախ քննություն, «զուգահեռ քննություն» սկզբունքով:

Ինչպես նաև, շատ կարևոր ընկալում կա, որ մեղադրյալի բոլոր իրավունքները, այն պահից երբ նա ձեռք է բերում պաշտպան, տարածվում են և դատապաշտպանի վրա, ինչը փաստում է ԱՄՆ Սահմանադրության վեցերորդ լրացումը 1791թ.. «Մեղադրյալը իրավունք ունի... տեղեկանալու իրեն ներկայացված մեղադրանքի էության և հիմքերի մասին, առերեսվելու իր դեմ ցուցմունք տվող վկաների հետ, հարկադրաբար հրավիրելու իր կողմի վկաներին և իր պաշտպանության համար ստանալու փաստաբանի օգնությունը»:

Սա, բնականաբար, ընդունվել է քրեական արդարադատության համակարգում հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով, անձի իրավունքների և օրինական շահերը պաշտպանելու համար: Լրացումների բովանդակությունը զարգացել է մանրամասնվել է ԱՄՆ ողջ պատմության ընթացքում, ԱՄՆ գերագույն դատարանի կողմից իրականացված նորմերի սահմանմամբ, որն իրականացվել է սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

Հետաքրքրական է նաև այն, որ առկա է փաստաբանների տեսակների դասակարգում, որի համաձայն՝ կա փաստաբան, ով ընդամենը ապահովում է գործով ֆորմալ մասը՝ փաստաթղթերի կազմում շահառուի հետ, բանակցությունների փուլ, գործի նկարագրի ներկայացում և այլն, սակայն վերջինս չի կարող հանդես գալ ճառով դատարանում:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ –ում առկա փաստաբանության ինստիտուտը, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մինչդատական վարույթի ընթացքում ապացույցներ ձեռք բերելու պաշտպանին



տրված հնարավորությունները, Նախագծի առաջարկությունները և միջազգային փորձի վերլուծությունը, սույն հոդվածի շրջանակներում առաջարկվում է փաստաբանի կողմից ապացույցների ձեռքբերման գործընթացում իրականացնել փոփոխություններ՝ ընձեռելով անկախություն քրեական հետապնդումն իրականացնող մարմնից որոշակի ինքնուրույն քննություն կատարելու գործընթացում: Այնուամենայնիվ, կարծում ենք, պետք է փորձել հնարավորինս խուսափել թռիչքային և արմատական փոփոխություններից, իսկ անգլո-սաքսոնական համակարգում առկա մոդելը հայեցակարգային տեսանկյունից այլ է, ուստի հոդվածն առաջնորդվել է պրակտիկ փաստաբանների առաջադրած խնդիրների առաջնահերթությամբ և լուծումները տրվել են հենց այդ խնդիրների կապակցությամբ՝ առանձնացնելով կարևորագույնները:

1. պահպանել արդար դատաքննության սկզբունքը՝ պաշտպանին տալով հնարավորություն անձամբ, ուղղակիորեն, ձայնագրման կամ նկարահանման միջոցներով վկային հարցեր տալու առերեսում և հարցաքննություն դատավարական գործողությունների ժամանակ:

2. Փորձագիտական եզրակացությունների պատճենների տրամադրման պարտականությունը դնել փորձագետի վրա, հակառակ պարագայում նախատեսել քրեական սանկցիա:

3. Քրեական գործին որպես ապացույց կցել պաշտպանի կողմից մասնավոր անձանց հարցման ենթարկելու արդյունքում ձեռք բերված ուղղակի և անուղղակի ապացույցները, մասնավոր անձի հարցաքննությունը դիտել որպես դատավարական գործողություն, որի նպատակն է ձեռք բերել գործով ապացույց: Ընդ որում, կարծում ենք, որ իրավական երաշխիք կլինի տեսանկարահանող միջոցների առկայությունը, հարցվողի կողմից իր ձեռագրով, իր անունից և ստորագրությամբ գրելը, ցուցմունքը արձանագրելը, որպեսզի հետագայում դատարանում մասնավոր անձը չկարողանա հրաժարվել իր տված ցուցմունքից, իսկ դատարանն էլ իր կողմից պետք է ստուգի տվյալ ապացույցի հավաստիությունը:

Այսպիսով, հոդվածն առաջարկում է ընդհանրապես առաջնորդվել այն մոդելով, որ եթե քննիչի ներկայացված ապացույցները վերջնական կերպով ենթակա են ստուգման դատարանում, ապա նույնը պետք է լինի պաշտպանի կողմից ներկայացված ապացույցների պարագայում: Դրանք պետք է ունենան կոնկրետ ապացույցի կարգավիճակ, չպետք է ըստ քննիչի հայեցողության ընտրվի այս կամ այն ապացույցի առկայությունը մինչդատական վարույթում և վերջիններիս պետք է տրվի հավասար պայմաններում ապացույցներ ձեռք բերելու հնարավորություններ:

1. *Строгович М.С., Природа советского уголовного процесса и принцип состязательности. — М.: Юрид. изд-во НКЮ СССР, 1939. — 251 с.:*

Пашин С. А. Проблемы доказательственного права // Судебная реформа: юридический профессионализм и проблемы юридического образования. М., 1995. с. 312—322:

2. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2009թ., 2010թ., I կիսամյակ, II հարրո, գործ 40, էջ 299, Գ.Միքայելյանի որոշում, ԵԱԴԿ/0085/06/09:

3. Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարանի որոշում, գործ թիվ ԼԴ/0301/01/09:

4. Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին փոփոխված 11-րդ արձանագրությամբ, հոդված 6³, կեր դ:

5. ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 10-ի նիստի N 9 արձանագրային որոշման հավելված:

6. *Constitution of the United States of America, 5th, 6th Amendment, Bill of Rights:*

7. *В.А. Власихин. частная юридическая практика в США.*